

ՊԵՏՐՈՍ ՆՈՎԱԿՆՆԻՍՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԴՐՈՇԻ՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Նայաստանի Նանրապետության հռչակումը (28 մայիս, 1918 թ.) կարևոր նշանակություն ունեցավ հայկական նորոգ պետականության կերպման գործում: Շուրջ 500 տարի հայ ժողովուրդը զրկված էր պետականությունից եւ մայիսի 28-ի ակտով հնարավոր դարձավ նորովի կերպել պետական կառույցներն ու խորհրդանիշները:

Նանրապետության խորհրդանիշներն սկսվել են օգտագործվել դեռեւս մինչեւ դրանց պաշտոնապես հաստատումը: Այդ տեսակետից հարկապես հարկանշական են պետական դրոշի ընդունման հետ կապված իրողությունները: Նայրնի է, որ Նայաստանի Նանրապետության պետական դրոշը չի հաստատվել պետական մարմինների՝ խորհրդարանի եւ կառավարության կողմից, սակայն սկսել է օգտագործվել դեռեւս 1918 թ. երկրորդ կեսից:

Իրադարձություններին քաջապետյակ եւ դրանց բոլորից մոտ կանգնած Նայաստանի Նանրապետության երբեմնի վաճապետ Սիմոն Վրացյանը վկայում է, որ պետական դրոշը ընդունվել է 1918 թ. հուլիսին՝ Թիֆլիսի եւ Երեւանի Ազգային խորհուրդների՝ Երեւանում կայացած միացյալ նիստում՝ վերջնական հաստատումը թողնելով Սահմանադիր ժողովին: «Դրոշակի ձեւի եւ գույնի շուրջ,- գրում է Ս. Վրացյանը,- եղան բավական երկար խորհրդակցություններ. ի նկատի առնվեցին Նայոց պարմական դրոշակները, լավեց հայկաբան Սյր. Մալխասյանցի հիմնավորված գեկուցումը հայկական դրոշակի մասին եւ, ի վերջո, որոշվեց ընդունել **հորիզոնական կարմիր, կապույտ ու նարնջի** երեք գույները՝ պայմանով, որ վերջնական հաստատումը կատարվի Սահմանադիր ժողովի կողմից, որը պետք է գումարվեր Նայաստանի երկու հարվածների միացումից հետո:

Ինչ բովանդակություն կամ խորհուրդ էր դրվում այդ գույների կամ դրոշակի ամբողջության մեջ:

Առանձին պարզամալորներ իրենց մարքում ունեին, անշուշտ, որոշ բացառություն, ոմանք ճառով էլ արտահայտվեցին, բայց Նայաստանի խորհուրդն այդ մասին որեւէ որոշում չստացավ, եւ դրոշակն իր ամբողջության մեջ, գույների ընտրությունն ու դասավորությունը, ավելի շուտ, արդյունք էր քվեարկության պարահականության:

Պարզամալորների մի մասի կողմից մասնավոր առարկություն էր լսվում, գլխավորապես գործնական տեսակետից, նարնջագույնի դեմ, Նայաստանում դժվար էր այդ գույնի կտոր գտնել: Առաջարկում էին փոխարենը դնել կանաչ գույնը. ոմանք փաստ էին բերում, որ կանաչը մեր պարմական գույներից մեկն է: Բայց նարնջի գույնը առանձնապես պաշտպանում էր Նովհանես Բաջազունին, որն առաջնորդվում էր սոսկ գեղասիրական նկատառումներով. կարմիրի, կապույտի եւ նարնջագույնի ներդաշնակությունը դուր էր գալիս նրան:

Կային, սակայն, հայկական եռագույնի մեջ եւ գաղափար ու խորհուրդ դնողներ: Այդ գույները, կարծես, բխում էին մեր կյանքից, խորհրդանշում էին հայ պետականության ծագումն ու ապագան: Կարմիրը հայ ժողովրդի թափած արյունն էր, կապույտը՝ Նայաստանի կապույտ երկինքը եւ նարնջի կամ ոսկու գույնը՝ խորացումը մեր աշխարհների: Նայ ժողովուրդը, որ արյունով էր ձեռք բերել իր ազատությունը հայրենի կապույտ երկնքի փակ իր համբավավոր աշխարհասիրությամբ՝ պիտի վերաշիներ երկիրը եւ ապրեր ազատ ու երջանիկ...»²:

Այսպիսով, Թիֆլիսի եւ Երեւանի Ազգային խորհուրդների միացյալ նիստի մասնակիցների քվեարկությամբ է, որ հանրապետության պետական դրոշն ունենալու էր հորիզոնական կարմիր, կապույտ ու նարնջի երեք գույները: Նայաստանի Նանրապետության պետական դրոշն առաջին անգամ բարձրացվել է 1918 թ. օգոստոսի 1-ին խորհրդարանի շենքի գլխին՝ Նայաստանի խորհրդի բացման օրը: Բայց նարնջի գույնի կերպասի առկայությունն այն ժամանակների Երեւանում անհնարին էր ապահովել: Ելքը փորձել էր հուշել ներքին գործոց նախարար Արամ Մանուկյանը: 1918 թ. սեպտեմբերի 19-ին նա շրջաբերական հրահանգ է ուղարկել պետական կառավարման հիմնարկություններին՝ ունենալ եւ կրել «Նանրապետության դրոշակ հետեյալ գույներով, ըստ կարգի վերելից ներքեւ՝ կարմիր, կապույտ, դեղին»³:

Վերը շարադրվածը վստահորեն վկայում է, որ Նայաստանի Նանրապետության պետական դրոշը եղել է ժամանակավոր, իսկ վերջնական հաստատումը թողնվել է Սահմանադիր ժողովին⁴: Բնականաբար, պետական դրոշի վերջնական փառքերակի վերաբերյալ եղել են ոչ միայն խորհրդակցություններ, այլեւ խոսակցություններ, առաջարկություններ : Այս փեսանկյունից հետաքրքրությունից զուրկ չեն հայ նշանավոր նկարիչ Մարտիրոս Սարյանի խորհրդածությունները, որ ստորեւ ներկայացնում ենք մեր ընթերցողներին: Իր փեսակերները Նայաստանի պետական դրոշի գույների եւ դրանց հերթականության մասին նա հարույկ նամակով փոխանցել է հանրապետության վարչապետ Ալեքսանդր Խաչիսյանին:

Նամակը, որ գրված է ռուսերեն 1919 թ. հուլիսի 3-ին Նոր Նախիջևանից, արդեն հրապարակվել է նկարչի թոռնուհու՝ Ռուզան Սարյանի կողմից⁵: Ցավոք հրապարակումը չի ուղեկցվել Մարտիրոս Սարյանի երեք ջրաներկ պարկերների (դրոշի) վերապատմով: Կարծում ենք, որ դա ավելորդ չէ: Մեր մշակույթի մեծերից պահպանված յուրաքանչյուր փող, էսքիզ, սեւագիր նոթ եւ այլն իրական մասունքի արժեք ունի, ինչպես օրինակ՝ Լեոնարդո դա Վինչիից ու Պիկասոյից կամ Չարենցից ու Թումանյանից, Ադունցից ու Իսահակյանից հրաշքով փրկված հիշատակները: Այս նկատառումով է, որ հրապարակում ենք Մարտիրոս Սարյանի առաջարկած Նայաստանի պետական դրոշի էսքիզներն ու խմբագրական առանձին միջամտություններով՝ Ալ. Խաչիսյանին ուղղված նամակը⁶:

2 Ս. Վրացյան, Նայաստանի Նանրապետություն, Թեհրան, 1982, էջ 183:

3 Ա. Վիրաբյան, Ինչպես են ընկրվել Նայաստանի առաջին Նանրապետության պետական խորհրդանիշերը, «Նայաստանի Նանրապետություն», օրաթերթ, 2006, 8 ապրիլի, թ. 64:

4 Ն. Տէր-Ստեփանեան, Հայկական դրոշակներ եւ զինանշաններ, Բէյրութ, 1966, էջ 47-48:

5 Մարտիրոս Սարյան, Նամակներ, հայտ. I (1908-1928), փեքսերը պատրաստեց, կազմեց, խմբագրեց եւ առաջարկեց գրեց Ռուզան Սարյանը, Երեւան 2002, էջ 216:

6 Բնագիրը փեն ՆՆ Ազգային արխիվ, ֆ. 200, ց. 1, գործ 35, թ. 138, 139, 140:

Մեծարգո Ալեքսանդր Իվանովիչ,

Մոտ մեկ ամիս առաջ զեկուցման համար այստեղ էր եկել Հայաստանի ներկայացուցիչ, Հայոց խորհրդարանի անդամ Մարտիրոս Հարությունյանը: Իմիջիայլոց, ես նրանից եմ իմացել մեր ազգային դրոշի մասին, որը խորհրդանշում է ծիածանը: Գաղափարը բոլոր առումներով հանճարեղ է: Հրաշալի խորհրդանիշ է:

Սակայն Մարտիրոս Հարությունյանի խոսքերից իմացա, որ դրոշը վերջնականապես մշակված չէ, եւ ես՝ որպես նկարիչ, համարձակվում եմ անել մի բանի առաջարկություն:

Ծիածանի հիմնական գույները հետեւյալն են՝ կարմիր, դեղին եւ կապույտ, իսկ լրացուցիչներն են՝ նարնջագույնը, կանաչը եւ մանուշակագույնը: Ընդամենը վեց գույն, հետեւյալ հերթականությամբ՝

կարմիր,
նարնջագույն,
դեղին,
կանաչ,
կապույտ,
մանուշակագույն:

Գույների նման հերթականությունը թողնում է ծիածանի ամբողջական տպավորություն, եւ ինձ թվում է, թե հենց այդպիսին պետք է լինի Հայաստանի դրոշը:

Շեագույն դրոշներ ընդհանրապես բավականին շատ կան: Գույություն ունի նաեւ Դոնի բանակի կապտա-դեղնա-կարմիր դրոշը:

Իմ կարծիքով, մեզ՝ որպես արեւելյան ժողովրդի, չափազանց կպատշաճեր բազմագույն դրոշը, որն ի հայտ է բերում ինքը՝ չքնաղ եւ հավերժ գեղեցիկ ծիածանը:

Նամակին կցում եմ երեք ջրաներկ պատկերներ, որտեղ ամեն ինչ պարզ է:

Ալեքսանդր Իվանովիչ, դիմելով Ձեզ, որպես հին հասարակական գործչի եւ կրթված մարդու, որ գլխավորում է մեր կառավարությունը, հուսով եմ, որ Դուք անուշադրության չեք մատնի դիտողություններս եւ Ձեր ուժերի ներածին չափով ծիածանով կկամարեք մեր տանջված եւ սիրված Հայրենիքը:

Անկեղծորեն Ձեզ նվիրված՝
Նկարիչ Մարտիրոս Սարյան

1919 թվական
31 հուլիսի
Դոնի Նախիջևան
1-ին Սոֆիեւսկայա, 27